անդ. յետ ժամուն հետ միաբանիցն կերայ զհացն եւ ելեալ գնացի ի տուն, և նստաք ի հօրքուրանց տունն։ Օրս ի դէմ առաւօտուն եկեալ Յարութիւնն մեր եւ Խօճա Դանիէլն՝ առաջի Տաւուտին բերեալ զտաճիկն զայն ի խանս մեր, յորում հուճէթն ունէր, զոր տվեալ էին Մուղնեցին և իւրքն, և պատմեաց թէ Մարդիկ եկեալ սոքա և տվին ինձ ԵԾ զուռուշ թէ Այս ինչ անուն սեապլուխ մի կայ ի մեզ և երբեմն տաճիկ լեալ է և այժմս սեապլուխ է. ահա՛ հիւճէթն և տուր արէ. և ես ասի՝ Թո՛ղ լինի։ Եւ ես եկեալ ի միտս իմ և մտատանջ եղեալ իմ, քանզի լըւեալ էի զհամբաւ նորա, քանզի այր իմաստուն է և հաւատարիմ. ես հարցանէի բազում անգամ ծանօթ եղեալ Հայերու և նոքա ասէին թէ Այդ խօսք սուտ է, պարո՛ն, չլինի թէ այդ բան առնես, քանզի մի անհաւատ սեապլուխ կայ ի մեր մէջն, զայդ անունդ կու հանէ՝ թէ զնա փախուցանէ և ինքն չելանէ ի քաղաքէս։ Եւ նոքա ինձ ԵԾ զուռուշ ասացին, թէ տաճկցնես՝ ա՛ռ զԵԾ զուռուշն, թէ փախցընես (գող մը կորուած) և ես զմեծ բանս զայս առնէի և նա չտաճկանայր և զնա այրէին կամ սպանանէին և ես լինէի արեան տէր, զի թէ մի ճանճի թեւ պըծուցեմ, նա՛ զայն չկարեմ բժշկել եւ ի տեղն դնել, զիա՛րդ երթայի և զնորա արիւնն ի վերայ իմ առնէի։ Այսպիսի ասելով տաճկին առաջի Ղալաթացոց և այլ յայս կողմէս և յեկեղեցեացս ոմանցս, և հանեալ զհիւճէթն տվաւ սոցա թէ Գնացէ՛ք, մարդի՛ք, և ես անպարտ գտայց ի գործոյդ։

Կիրակի (20 Ապրիլ) առաւօտուս գնացաք ի մեր ժամն եւ Պալին տղայ մի կնքեցաք. եւ արձակմանն լւաք՝ թէ ի յԱստուածածին աղմուկ է եղեալ, քանզի զթուղթն ուղարկել են ի Սուրբ Գէորք՝ թէ մօհրեն որ ուղարկեն ի յԱստուածատուր վարդապետն. նա՛ նոքա չեն մօհրեր և բերօղն տվեր թէ Զմօհրեցին. և նա ել